

ԱՌԱՍՊԵԼԱԿԱՆ ԴՐՍԵԻՈՐՈՒՄՆԵՐԸ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՒԱՏԱԼԻՔՆԵՐՈՒՄ ԵՒ ԱՍՈՅԹԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ

ԱՐՄԷՆ Շ. ՍԱՐԳՍԵԱՆ (armensargg@gmail.com)

ՄՈՒՏՔ

Վաղնջական ժամանակներում մարդ արարածը, չկարողանալով բացալայտել իրեն շրջապատող աշխարհը, բնութեան երեւոյթների, մարդկային փոխարաբերութիւնների գաղտնիքները, դրանց «միս ու արիւն» է տուել, մեկնաբանել տարատեսակ աստուածութիւնների, առասպելական կենդանիների, թռչունների եւ տարաբնոյթ առեղծուածային ուժերի՝ աներեւոյթ չար ու բարի ոգիների գոյութեամբ, յօրինել հաւատալիքային կաղապարներ եւ խեղճացել իր իսկ ստեղծած յօրինուածքների առաջ: Դրանք, հազարամեակների միջով անցնելով ու անընդհատ վերափոխուելով, սերնդէտերունդ բանաւոր փոխանցմամբ կամ էլ տարատեսակ քարապատկերների ու պատկերագրութիւնների միջոցով շարունակել են գոյատեւել եւ ծառայել մարդկութեանը:

Ճիշտ է, հնագոյն ժամանակներից մեզ հասած այդ առասպելաբանական պատկերացումների արտացոլումները ժողովրդական բանարուեստի մի շարք տեսակներում՝ առասպելներում, հեքիաթներում, ականդագրոյցներում են., ակնառու է, սակայն սրանք եւս նոր ժամանակներում՝ գիտութեան եւ արհեստագիտութեան, կրթամշակութային, ընկերատնտեսական առաջընթացով պայմանաւորուած, կամայ թէ ակամայ մոռացութեան տրուելով՝ ասպարէզից շատ արագ դուրս են գալիս:

Այնուամենայնիւ մեր նախնիների դիցաբանական ըմբռնումների մի շարք դրսեւորումներ՝ պատառիկների տեսքով, «պատսպարուել» են գրական հայերէնում եւ բարբառներում, հաւատալիքներում, ժողովրդական բառ ու բանում, մասնաւորապէս ասոյթաբանութեան մէջ:

Ասածը հիմնաւորելու եւ որոշակի հետեւութիւնների յանգելու նպատակով նմանատիպ «պատսպարուած» արտացոլումները վեր ենք հանել եւ համադրել առկայ փաստարկների հետ՝ օգտագործելով ինչպէս տարատեսակ բառարաններ (դիցաբանական բառերի, դիցաբանական անունների, բարբառային բառերի, դարձուածքների, բացատրական են.), այնպէս էլ առասպելաբանութեանն առնչուող գիտական ուսումնասիրութիւններ, տեղավայրերին նուիրուած գրքեր, դաշտային աշխատանքների ժամանակ մեր գրառած նիւթերը են.:

Քննարկելիք թեման ներկայացնելու համար առասպելական տարատեսակ դրսեւորումները ընդգրկել ենք չորս պայմանական խմբերում՝

1. Հայ եւ հարեան ժողովուրդների դիցաբանների աստուածութիւններ,
2. Առասպելական տեղավայրեր եւ շինութիւններ,

3. Առասպելական թռչուններ եւ կենդանիներ,

4. Առասպելական չար եւ բարի ոգիներ:

Սրանցից իւրաքանչիւրին վերաբերող նիւթերն այնքան շատ են, որ որ ծաւալի պատճառով անհնար է իւրաքանչիւրին անդրադառնալը: Հետեւապէս շարադրանքում ներկայացուած միքանի փաստարկ-օրինակներով փորձել ենք հիմնաւորել ինչպէս հայ, այնպէս էլ հարեւան ժողովուրդների դիցաբանական պատկերացումների ազդեցութիւնը հայ ժողովրդի մտածողութեան վրայ եւ այսօր պահպանուած դրանց պատառիկների առկայութիւնը հայերէնում եւ ժողովրդական բառ ու բանում:

ՀԱՅ ԵՒ ՀԱՐԵՒԱՆ ԺՈՂՈՎՈՐԴՆԵՐԻ ԴԻՅԱՐԱՆՆԵՐԻ ԱՍՏՈՒԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ

1-ա. Ծովինարը (Նար) հայոց դիցարանում ջրի, ծովի, անձրեալներութեան աստուածուհին է:

Հայկական առասպելներում **Ծովիան (Ծովեան) – Ծովինարը** ջրային տարերքի հետ կապուած ոգին է: Դիցաբանական այդ կերպարն իր գեղարուեստական արտացոլումն է գտել հայոց *Սասնայ ծռեր* դիցազներգութեան մէջ, ուր նա ներկայանում է ծովից յղիացած երկուորեակների՝ Սանասարի եւ Բաղդասարի մօր գործառոյթով:

Թէ՛ հայ ժողովրդական հաւատալիքներում եւ թէ՛ մեր հերոսավէպում **Ծովիան (Ծովեան) – Ծովինարը** կապուած է ծովի հետ եւ ընկալուել է իբրեւ ամպրոպակայծակնային տարերքի մարմնացում:

Եթէ հայոց դիցարանում վիշապի դէմ կռուողը երկնքի ծովից ծնուած ամպրոպային աստուած Վահագնն է, ինչի ապացոյցը նրա Վիշապաքաղ մականունն է, ապա ժողովրդական հաւատալիքներում Ծովինար-Նարը ամպրոպային ոգին՝ փայլակ-կայծակի իգական անձնաւորումն է: Նա մի հրեղէն էակ է, որը ամպրոպի ժամանակ կարող է աղէտաբեր կարկուտ թափել կամ կենարար անձրեւ պարգեւել:

«Կայ նաեւ մի ամպրոպային կամ կայծակի աստուածուհի, ինչպիսին ունեցել են եւ յոյները,- գրում է Մանուկ Աբեղեանն ու հիմնաւորում,- դա է հրաչք Ծովեանը կամ Ծովինարը, ամպրոպի եւ կայծակի կամ փայլակի անձնաւորումը: Նա մի պաշտելի առասպելական էակ է, մի աղջիկ հրաչեայ ու հրեղէն, որ վերին երկնքում է ապրում եւ վերահաս ամպրոպից առաջ ամպերի մէջ, հրեղէն ձիու վրայ նստած, խաղալով ցոյց է տալիս վայրկենապէս իր երեսը, որից եւ փայլաւորւում է... Ամպրոպային մութ գիշերները յանկարծ նա իր գլուխը հանում է ամպերի ետեւից եւ նայում դէպի ցած: Այդ ժամանակ «Ծովեանը խաղում է», այսինքն՝ փայլաւորւում է»¹:

¹ Մ. Աբեղեան, *Երկեր, Ա. հպր.*, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1966, էջ 78:

Իդէպ, *Ծովինար-Նարը*, իբրեւ ջրի, անձրեաբերութեան դիցուի, հայոց դիցարանում առանձնացուած է Ծովիան-Ծովեանից: Վերջինս տարբերում է իր գործառոյթով. *Ծովեանը* կայծակի աստուածութիւնն է:

Հայերէնի մի շարք բարբառներում ու խօսվածքներում (Լօռի, Շուկավեր, Ղազախ, Խարբերդ եւ այլուր) այդ երկու գործառոյթները միացուել են: Թէ՛ Ծովիանը (Ծովեան), թէ՛ Ծովինարը **փայլակը, կայծակն է՝**

Լօռու մարզի Շամուտ գիւղի խօսվածքում Ծովիան (Ծովեան)-Ծովինարը ներկայանում է ոչ թէ կայծակի *հարուածի* գործառոյթով, ինչպէս գրական հայերէնում է ասում՝ *կայծակը խփեց* (չի ասում *Ծովեան-Ծովինարը խփեց*), այլ ժողովրդական դարձուածքով նկարագրում է երկնքում կայծակի շողալու, կայծակից առաջացած լոյսի ձեւաւոր շեղջի, այսպէս ասած, գեղարուեստական պատկերը՝ **խաղալը՝ Ծովիանը կամ Ծովինարը խաղաց՝**:

«Ծովինարը խաղաց» դարձուածքի կիրառութեանը հանդիպում ենք նաեւ բանահաւաք Տիգրան Նաւասարդեանցի հրատարակած հեքիաթներից մէկում, որին անդրադարձել է նաեւ Աբեղեանը՝ Վահագն ամպրոպային աստծուն անդրադառնալիս. «...Ամպն ու չանգը գետինն առել են. **Ծովինարն էնեց խաղում ա**, որ կ'ասես թէ ուզում ա աշխարքը կրակ տայ»²:

Ստեփան Մալխասեանցի բառարանի՝ Ծովիան – Ծովինարը առանց ուրոտմունքի փայլակն է՝ երեկոները կամ գիշերները օդում կայծակի նման լուսաւոր երեւոյթը³:

Երկնքի ծովից ծնուած ծովածին Ծովինարը վաղնջական ժամանակներում այնքան հոգեհարազատ է եղել հայ ժողովրդին, որ նրան ոչ միայն անձնաւորել է իր ժողովրդական բանարուեստում, մասնաւորապէս ազգային դիցազնավէպում, այլեւ դարձրել է հայոց սիրելի իգական անձնանուններից մէկը:

1-բ. Հնագոյն ժողովուրդները, կողք կողքի ապրելով, միմեանցից փոխ են առել թէ՛ բառեր ու բառակապակցութիւններ, թէ՛ մարդուն եւ աշխարհին կառավարող ուժերի վերաբերեալ տարատեսակ առասպելական պատկերացումներ:

Այսպէս, յունական դիցաբանութեան մէջ **Մորփէոսը** քնի աստուածութիւնն է, նաեւ երազի աստուածը, Հիպնոս աստծոյ որդին: Անտիկ արուեստում նա պատկերուել է թեւաւոր ծերունու տեսքով: Մորփէոսը «*յունաց դի-*

² Հայոց լեզուի բարբառային բառարան, Բ. հտր., «Գիտութիւն» հրատ., Երեւան, 2002, էջ 420:

³ Արմէն Շ. Սարգսեան, դաշտային գրառումներ. նաեւ՝ Հայոց լեզուի բարբառային, Բ. հտր., էջ 420:

⁴ Աբեղեան, Ա. հտր., էջ 81:

⁵ Ս. Մալխասեանց, Հայերէն բացաբարական բառարան, չորս հատորով, հտր. 2, ԵՊՀ հրատ., Երեւան, 2010, էջ 351:

ցաքանութեան մէջ՝ քնի եւ երազների աստուածը, որից՝ փոխ.՝ քուն, Մորփէոսի գիրկն ընկաւ, քնեց»⁶:

Մորփէոս բառից է առաջացել նաեւ մի շարք ժողովուրդների բժշկութեան մէջ կիրառուող քնաբեր դեղամիջոցի անուանումը՝ **մորֆի**⁷:

Քնի այդ աստուածութիւնից «յիշատակ» մնացած «Մորփէոսի գրկում», «Մորփէոսի գիրկն ընկնել», «Մորփէոսին անձնատուր լինել» այլաբանական արտայայտութիւնը գրական հայերէնում նշանակում է **քնի մէջ, քաղցր քուն, քուն մտնել**⁸:

Քնի աստուածութիւն **Մորփէոսը**՝ հնչինափոխուած ձեւերով, հայերէնի բարբառներում ընդգծում է անձնանուան կատարած միայն **բայական** գործառոյթը⁹:

Այսպէս, հայերէնի բարբառներում եւ խօսուածքներում (Արարատեան, Արցախ, Պոլիս, Վան, Սեբաստիա, Շամախի) **Մորփէոսը**՝ **մրափ-մուրափ** ձեւերով, նշանակում է թեթեւ քուն, նիրի: Արցախի որոշ շրջաններում, Շամախիում, ինչպէս նաեւ Վանում **մրափ-մուրափը** խոր քունն է¹⁰:

Լօռիում (գ. Շամուտ)¹¹ եւ Սեբաստիայում¹² **մրափը** թմբիրն է, նստած տեղը քունը տանելը, նիրհելը:

Մրափելը մի շարք բարբառներում եւ խօսուածքներում (Արարատեան-Լօռի, Արցախ, Պոլիս, Վան, Սեբաստիա, Շամախի) քնելն է¹³:

Փաստենք նաեւ, որ Եւդոկիայում կէս քուն-կէս արթուն վիճակում **մէկ քնել, մէկ արթնանալը** արտայայտում է «**մրափփել**» բայով¹⁴:

Արցախի բարբառում **մրափելը**՝ քնել իմաստով, ասում է **կենդանիների** մասին, իսկ այն անարգական է եւ համարում է վիրաւորական, երբ մարդուն են **մրափել** ասում¹⁵:

Իդէպ, եթէ Լօռիում բայական կառոյցի մէջ վիրաւորական, անարգական խօսքը ոչ թէ **մրափով** է արտայայտուած, այլ՝ **մռփելով**՝ «Գնա՛

⁶ Մայիսասեանց, *հպր.* 3, ԵՊՀ հրատ., Երեւան, 2010, էջ 361:

⁷ *Դիցաբանական բառարան* (Մ. Ն. Բոտովինիկ, Մ.Ա. Կոզան, Մ.Բ. Ռաբինովիչ, Բ.Պ. Սելեցկի), թարգմ.՝ Ա.Մ Կրկեաշարեան, Երեւան, «Լոյս», 1985, էջ 162:

⁸ Պետրոս Ա. Բեդիրեան, *Հայերէն դարձուածքների ընդարձակ բացատրական բառարան*, ԵՊՀ հրատ., Երեւան, 2011, էջ 966:

⁹ Հակոբակ Մորփէոսի գաղափարը հերքելու Աճառեանի տեսակէտին՝ թէ՛ «Մորփէոս» անունն ու նրա հնչինափոխուած ձեւերը բարբառներում, թէ՛ նրա կատարած գործառոյթը եւ բարբառներից բերուած օրինակները, թէ՛ հայ եւ օտարագլխի մի շարք լեզուաբանների մեկնաբանութիւնները անհերքելի ապացոյցներ են:

¹⁰ *Հայոց լեզուի բարբառային բառարան*, Դ. հպր., «Գիտութիւն» հրատ., Երեւան, 2007, էջ 87:

¹¹ Սարգսեան, դաշտային գրառումներ:

¹² *Հայոց լեզուի բարբառային բառարան*, Դ. հպր., էջ 87:

¹³ Նոյն:

¹⁴ Նոյն:

¹⁵ Նոյն:

մոփի» (Լոռի, ԱՍՇ¹⁶), ապա Ուրմիայում եւ Մուշում **մոփեղը** ոչ թէ վիրատրական, այլ սովորական մրափելու, քնելու իմաստն է արտայայտում¹⁷:

1-գ. Ատլաս-Ատլանտ (Ատլանտոս)ը յունական դիցաբանության մէջ տիտան հերոս է՝ Պրոմէթէոսի եղբայրը, որը իր հզօր ուսերի վրայ պահում է երկնականարը: «Այդ պատիժը նրա համար սահմանել էր Ձեւը, քանի որ նա տիտանների հետ կռուի էր ելել աստուածների դէմ»¹⁸:

Դիցաբանական այդ անձնանունը կորցրել է իր հիմնական գործառոյթը եւ մեր օրերում ոչ միայն յոյների, այլեւ հայոց եւ աշխարհի միա ժողովուրդների շրջանում մի դէպքում ընկալւում է որպէս *քարտէզագիրք*, աշխարհագրական *քարտէզների ժողովածու, գծագրերի՝ նկարների ժողովածու՝* ըստ գիտության ճիւղերի¹⁹, միւս դէպքում նաեւ՝ «**Ատլանտեան** ովկիանոսի, մէկ էլ այդ ովկիանոսում իբր գոյութիւն ունեցած եւ սուզուած **Ատլանտիդա** երկրի յորջորջումները»²⁰:

1-դ. Հին յունական դիցաբանության **Հերմէս** աստուածը Ձեւի որդին է՝ աստուածների սուրհանդակն ու լրատարը, ճարտասանութեան, նաեւ մարմնամարզութիւնների, առեւտրի, ճանապարհորդութիւնների հովանատորը, քնարի, այբուբենի, թուերի ու երաժշտութեան գիտարարը²¹: Նա է եղել արարիչը միքանի գաղտնախօսութիւնների ու խորհրդաւոր գիտութիւնների, մասնատրապէս ալքիմիայի: Հերմէսը նաեւ վարպետօրէն կարողացել է խցանել-զմուծել սրուակների բերանը²²:

1-ե. Ըստ Գալստեանի կազմած բառարանի՝ **Տարփարոսը** յունական դիցաբանութիւնում Եթերի եւ Երկրի որդին է: Ըստ առասպելաբանութեան՝ **Տարփարոսի** անուան հետ է կապւում այն ահաւոր անդունդը, որը լցուած է յաւերժական խաւարով: **Տարփարոս** տեղավայրը համարուել է նաեւ Քրոնո-

¹⁶ ԱՍՇ, գրառումը՝ Արմէն Շ. Սարգսեանի:

¹⁷ Հայոց լեզուի բարբառային բառարան, Դ. հպր., էջ 83:

¹⁸ Գ. Գալստեան, *Դիցաբանական անունների եւ դարձուածքների համառօտ բացատրական բառարան*, «Լոյս» հրատ., Երեւան, 1966, էջ 21:

¹⁹ *Ժամանակակից հայոց լեզուի բացատրական բառարան*, հպր. առաջին, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1969, էջ 205:

²⁰ Պ. Բեդիրեան, *Բառերի խորհրդաւոր աշխարհից*, «Արեւիկ» հրատ., Երեւան, 1989, էջ 77:

²¹ Բեդիրեան, էջ 42-43:

²² Դիցաբանական կերպարի հենց այս վերջին գործառոյթն էլ երոպական ժողովուրդներից շատերի լեզուներում արտայայտում է **հերմեփիկ** ածականով, այսինքն՝ *Հերմէսի պէս փակել, ամրացնել* (Բեդիրեան, նոյն):

Հայ ժողովրդի առասպելական մտածողութեան մէջ Հերմէսը ընդունուած չի եղել: Նոր ժամանակներում վերոյիշեալ լեզուներում կիրառուող **հերմեփիկ փակ, հերմեփիկ խցիկ, հերմեփիկ վիճակ** բառակապակցութիւնները մուտք են գործել նաեւ հայերէնի բառապաշարի մէջ:

սի եւ տիտանների ստորերկրեայ բանտը, որի դարպասները փակուած էին պղնձածոյլ փականներով²³:

Ըստ հին յոյն բանաստեղծ Հեսիոդոսի՝ *տարտարոսը* երկրի ամենախոր ընդերքն է եւ գտնուում է երկրից այնքան հեռաւորութեան վրայ, ինչ երկիրը՝ երկնքից: Այն պատած է երեք շերտ խաւարով եւ երկաթէ (կամ պղնձէ) երեք պարսպով: Տարտարոսի երկաթէ (կամ պղնձէ) դարպասները դրել է ծովի աստուած Պոսէյդոնը: Տարտարոսի շուրջը յավերժօրէն մոլեգնում են փոթորիկները: Այնտեղ բանտարկուած են Քրոնոսը եւ պարտուած տիտանները՝ Հեկատոնքէյրոսների պահակութեան ներքոյ²⁴:

Ըստ *Ժամանակակից հայոց լեզուի բացատրական բառարանի*՝ «**Տարտարոսը** դժոխքն է՝ *Սանդարամետը*: Տեղանունն առաջացել է յունական աստուած **Տարտարոսի** անունից, որի ստեղծած հսկաները փակուած էին ստորերկրեայ թագաւորութիւնում՝ դժոխքի նախադռանը»²⁵, իսկ ըստ Մալխասեանցի՝ *Տարտարոսը* յունական դիցաբանութիւնում **դժոխք է դժոխքի մէջ**՝ մի անդունդ²⁶:

Հայ ժողովրդի հաւատալիքային պատկերացումներում *Տարտարոսը* ամրագրուել է իբրեւ **փանջարան, դժոխք, չարչարանքի տեղ**:

Մերօրեայ ժողովրդախօսակցական լեզւում եւ բարբառներում *տարտարոսի* անձնանուանական եւ սարսափազդու տեղավայրային գոյականական գործառոյթը վերափոխուել է բայով արտայայտած նրա ներգործած ազդեցութեամբ՝ հանդէս գալով հետեւեալ կառոյցներում՝

ա. յարադրաւոր բայով՝ տարտարոսի գալ, որը նշանակում է ինչ-որ մէկից, ինչ-որ բանից, ինչ-որ երեւոյթից *ցնցուել, սարսափել*՝

Հենց էդ խաբարն (իմա՝ լուրը) *իմացայ, տարտարոսի էկայ* (իմա՝ սարսափեցի, ցնցուեցի) (Լօռի, ԱՍՇ)²⁷:

Կամ էլ՝ *Որ միամիտ դէմս դուս չեկա՛ւ, տարտարոսի էկայ. քիչ էր մնըմ ուշկըս գնար* (Լօռի, ԱՍՇ):

բ. անէծքափոխ կառոյցով՝

Տարտարոսի գաս:

Կամ էլ՝ *Հենց տարտարոսի գաս, ես գիդենամ* (Լօռի, ԱՍՇ):

²³ Գալստեան, էջ 133:

²⁴ *Դիցաբանական բառարան*, էջ 231:

²⁵ *Ժամանակակից հայոց լեզուի բացատրական բառարան*, հպր. չորրորդ, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1980, էջ 467:

²⁶ Մալխասեանց, *հպր. 4*, Երեւան, ԵՊՀ, հրատ., 2010, էջ 389:

²⁷ Իդէպ, *տարտարոսը եւ տարտարոսային* կառոյցները *Հայոց լեզուի բարբառային բառարանում* չեն ընդգրկուել:

ԱՌԱՍՊԵԼԱԿԱՆ ՏԵՂԱՎԱՅՐԵՐ ԵՒ ՇԻՆՈՒԹԻՒՆՆԵՐ

2-ա. Ատակ-սեւ'ատակ, անատակ-սեւան'տակ, գարհետակ բառերն առնչում են ստորերկրեայ՝ անդրշիրիմեան թագաւորութեանը՝ **սեւ, մութ** աշխարհին:

Հայոց մի շարք բարբառներում դրանք հանդէս են գալիս հետեւեալ ձեւերով՝ սեւանատակ(ը)՝ (Արցախ-Գանձակ), սըւատատակ՝ (Արցախ-Գորիս), սեւանատագ(ը)՝ (Կարին), սեւանտակ(ը)՝ (Վան, Ուրմիա), եւ նշանակում են՝ **սեւ անդունդը, գրողի ծոցը, ցհանդամը**²⁸:

Արակը Արցախի բարբառում գետնի ամուր հողաշերտն է, որի վրայ շէնքի պատերն են դնում: Փոխաբերական առումով նշանակում է *դժոխք՝ Արակը քընաց*:

Այն կիրառում է յատկապէս **անէծքներում՝ Ա'րակը քընաս**²⁹:

Արակ(ու)ել բայը Արցախի եւ Սասունի բարբառներում նշանակում է կորչել, անյայտանալ, դժոխքը գնալ³⁰:

Արակուել բայը զայրալից խօսքում կոպտելու նպատակ ունի եւ նշանակում է **ռադը քաշել**՝ հեռանալ, գետնի տակն անցնել, անհետանալ՝

Կարա'ս ըստեղից արակուես:

Կամ էլ՝ *Հլա մի հապ ըստեղից արակուի* (Լոռի, **ԱՍՇ**):

Անապակ բառը Արարատեան, Սիւրիհիսարի, Ջաւախք-Կարինի բարբառներում նշանակում է *անյապակ, անդնդախոր, անհուն*, իսկ **անապակը գնալ** յարադրաւոր կառոյցում՝ *անյայտանալ, կորչել*: Արցախի բարբառում եւս **անապակուել** բայը նշանակում է *կորչել, անյայտանալ*³¹:

Իսկ **սեւապակ կորչիլ** յարադրաւոր կառոյցը նշանակում է անհետանալ, սեւ անդունդը մտնել³²:

Հաւանաբար դրանք բոլորն էլ կապ ունեն «յատակ» բառի հետ՝ **սեւ+ան + (յ)ապակ – հեպակ**:

Ժողովրդական ասոյթաբանութեան մէջ դրանք հանդէս են գալիս հիմնականում **անէծքային** կառոյցներում՝

ա. Վա'յ, *արակուես դու, հա', արակուես*: **բ.** *Սեւանապա'կը գնաս*: **գ.** *Անեպա'կուես դու*: **դ.** *Գարհե'տակը*³³ գնաս: **ե.** *Ա'յ անապա'կն ըլես, կամ էլ՝ Արակն ըլես, հա'*: Վերջինս ե'ւ անէծք է, ե'ւ փաղաքշական խօսք (Լոռի, **ԱՍՇ**):

²⁸ Հայոց լեզուի բարբառային բառարան, հպր. Ե., «Գիտութիւն» հրատ., Երեւան, 2008, էջ 310:

²⁹ Հայոց լեզուի բարբառային բառարան, հպր. Ա., «Գիտութիւն» հրատ., Երեւան, 2001, էջ 116:

³⁰ Նոյն:

³¹ Նոյն, էջ 55:

³² Հայոց լեզուի բարբառային բառարան, հպր. Ե., էջ 310:

³³ Գարհե'տակ – քարոյքանդ, քարոյքանդ եղած վայր: Գարհեպակ բառը բառարաններում բացակայում է:

Երկխոսական ասոյթաբանութեան մէջ դրանք հանդէս են գալիս անէծքով արտայայտուած զայրալից պատասխանական խօսքում, երբեմն էլ՝ այլ բառերին համադրուած.

– Չե՛մ գալի:

– Սեւանա տա՛կը գաս... (տրբ. **Գրո՛ղին** գաս, սեւանա տա՛կը գաս), որը նշանակում է՝ **հէջ էլ թէ գաս...** (Լօռի, ԱՍՇ)

2-բ. Հին յունական եւ հռոմէական դիցաբանութեան մէջ **պանթէոնը** բոլոր աստուածների կացարանն է:

Բեդիրեանի գրքում այսպէս է ներկայացուած *պանթէոնը*. «Պանթէոն հին յունարէն բառ է, որ կազմուած է «պան» նախածանցից եւ «թէոն (թէիոն)» բառից, տառացիօրէն նշանակում է «բոլոր աստուածներին»: Այսպէս կոչում էին բոլոր աստուածներին նուիրուած տաճարները»³⁴:

Ժամանակակից հայերէնում, ինչպէս նաեւ մի շարք այլ լեզուներում **պանթէոն** գոյականը, պահպանելով իր տեղավայրային գործառոյթը, շարունակել է կիրառուել ոչ թէ որպէս «տաճար՝ բոլոր աստուածներին նուիրուած»³⁵ իմաստով, այլ իբրեւ տարբեր բնագաւառների նշանաւոր գործիչների թաղման վայր՝ «**աստուածային մեծութիւնների**» հաւաքական **գերեզմանատուն**:

2-գ. Առասպելական շինութիւններ. Բաբելոնեան աշտարակ

Ըստ հին հրէական առասպելի՝ համաշխարհային ջրհեղեղից յետոյ մարդիկ փորձել են Սեւաար երկրում (Միջագետք) կառուցել քաղաք եւ աշտարակ, որի բարձրութիւնը հասնելու էր երկնքին: Հին *Կրակարանը* հաւաստում է, որ Եհովան զայրանում է մարդկանց այդ յանդգնութեան վրայ, խառնում է լեզուները, եւ մարդիկ, իրար չհասկանալով, ցրում են աշխարհով մէկ. «Եւ Եհովան այնտեղից նորանց ցրուեց բոլոր երկրի երեսի վերայ, եւ քաղաքը շինելուց դադարեցին»³⁶:

Հին *Կրակարանի* միջոցով փոխանցուած **Բաբելոնեան աշտարակաշինութեան** աւանդագրոյցն իր հետքն է թողել նաեւ հայոց ժողովրդական խօսքի վրայ: Այն **դարձուածային պարկերի** տեսքով կիրառուում է պատուհասած թէ՛ անձնական, թէ՛ զանգուածային դժբախտութիւնների դժպքում՝

Աստու բաբելական կրակ թափեց ժողովրդի գլխին (կամ՝ խեղճի գլխին): (ԱՍՇ)

«Աստու բաբելական կրակ»ը գործածուում է նաեւ հայոց **անէծքային** կառոյցներում՝

³⁴ Բեդիրեան, էջ 76:

³⁵ Մալխասեանց, *հայր.* 4, էջ 47:

³⁶ *Աստուածաշունչ. մատեան հին եւ նոր կրակարանների*, Յակոբ Պօյաճեան տպարան, Կոստանդնուպոլիս, 1896, էջ 11:

Մուշի բարբառում՝ Աստու բ'աբելագան կըրագ թափի վրէպի³⁷:

«Ասծու բաբելական կրա'կը թափի գլխուտ» եւ «Աստու բաբելական կրակ թափեց վրէս» դարձուածային պատկերով արտայայտութիւնները Բայազէտի՝ Գեղարքունիք-Սարուիան, եւ Ալաշկերտի՝ Գեղարքունիք-Թագազիւղի բարբառներում կիրառուած է թէ՛ անէծքային կառոյցում, թէ՛ անհատական դժբախտութիւնը նկարագրելիս³⁸:

ԱՌԱՍՊԵԼԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ ԵՒ ԹՌՉՈՒՆՆԵՐ

3-ա. Հայ ժողովրդի դիցաբանական պատկերացումների մէջ մեծ տեղ է յատկացուել **վիշապին**: Դա են վկայում վիշապներին վերաբերող թէ՛ հազարամեակների ընթացքում բանաւոր ասանդուած բանահիւսական ստեղծագործութիւնները՝ առասպելներ, հեքիաթներ, ասանդապատումներ, ասոյթաբանական տարաբնոյթ դրսեւորումներ, թէ՛ ձկնակերպ վիշապակոթողներն ու քարերին արուած պատկերագրութիւնները:

«Հայերէն «**վիշապ**» բառը նշանակում է մեծ օձ,- գրում է վաստակաշատ հայագէտ Աբեղեանը եւ շարունակում,- այդ բառը փոխառութիւն է իրաներէնից, որի մէջ դա մակդիր է «**աժի**» - իժ, օձ անուան. «**աժի վիշապա**»-օձ վիշապ, վիշապ օձ, որ մի դեմոն է»³⁹:

«Ժողովրդի մէջ հին ժամանակներից իվեր **վիշապ ասելիս ընկալուել է նաեւ փոթորիկ** կամ **ամպրոպային ամպ**⁴⁰, երբեմն էլ՝ **վիշապահողմ, թաթառ** կամ **սապրանի քամի**⁴¹:

Հենց պտուտահողմի աներեւակայելի ուժի եւ կատարած անբաժութիւններն էլ պատճառ են դարձել, որ մեր նախնիները դրանք վերագրեն անտեսանելի ինչ-որ կենդանու՝ առասպելական **վիշապին**:

Իդէպ, Լօռիում (Շամուտ, Դսեղ) **սապրանի քամուն**՝ պտուտահողմին, «**սըտանաբլուիք**» են անուանում: **Բըլուլաճ** կամ **բըլբուլաճ** են անուանում նաեւ փայտի ռանդած **ողորածեւ փաշեղը**⁴²:

Անցեալում գիտացիները շապիկ-փոխանի վրայի անիծ-ոջիլներից որպէսզի ազատուէին, ներքնաշորերի ծայրից բռնած՝ կրակի վրայ արագ պտտում էին, կտրուկ կանգնեցնում եւ բացելով՝ բաց թողնում, որ միջատները թափուէին կրակի մէջ: Այդ գործողութիւնը Շամուտում անուանել են

³⁷ Ս. Բաղդասարեան-Թափալցեան, *Մշոյ բարբառը*, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երեւան, 1958, էջ 212:

³⁸ Սարգսեան, դաշտային գրառումներ:

³⁹ Մ. Աբեղեան, *Երկեր, Է. հատոր*, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1975, էջ 110:

⁴⁰ Աբեղեան, *Է. հատոր*, էջ 117:

⁴¹ *Ժամանակակից հայոց լեզուի բացաւորական բառարան, հատոր չորրորդ*, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1980, էջ 415:

⁴² Ս. Քոչարեան, *Դսեղ*, «Ասողիկ» հրատ., Երեւան, 2009, էջ 441. նաեւ՝ Ա.Շ. Սարգսեան, «Շամուտ. պատմաազգագրական-բանահիւսական նիւթերի ժողովածո» (անտիպ):

բլուլիճ անել⁴³:

Թե՛ սըտանաբլուլիճ, թե՛ բլուլիճ անել, եւ թե՛ բըլուլաճ կամ բըլբուլաճ բառերի հիմքում ընկած է **վիշապի՝ պտուտակածէ հողմ** առաջացնելու երեւոյթը:

Լօռիում (գ. Շամուտ) եւ Տաւուշում (գ. Կոթի) առասպելական կենդանի վիշապին **ուշաք** են ասում: Շամուտի սարուորների սարատեղի տակ հսկայ քարեր կան, որ կոչւում են ուշաքի գոտեր կամ գոռեր: Երաշտ տարիներին մեծահասակները երեխաներին յանձնարարում էին կժերով ջուր տանել եւ լցնել դրանց վրայ, որ «չորէյինը (իմա՝ երաշտը) բերքը չփչացնի»⁴⁴:

Շամուտում եւ Կոթիում անյագ ծարաւից չափից աւելի ջուր խմողին նմանեցնում, համեմատում են **ուշաք-վիշապի** հետ՝ ասելով. «**Ուշաքի պէս ես խմում**: Կամ էլ՝ «**Ոնց որ ուշաք ըլես**»: Երբեմն էլ դիտողութիւն անելիս ասում է. «**Ի՞նչ ես վրայ փալով խմըմ, խու դու ո՛ւշաք չես**» (ԱՍՇ)

3-բ. Դեւերը հայ ժողովրդական առասպելներում անսահման ուժի տէր հսկաներ են, որոնց համար իբրեւ մակդիր գործածւում է «**աժդահա**» բառը:

Տիգրան Մեծի վէպին անդրադառնալիս Աբեղեանը տալիս է նաեւ Տիգրանի հակառակորդ մարդ-վիշապ **Աժդահակի** անուան ստուգաբանութիւնը. «**Աժդահակ**» անունը առասպելական Աժի Դահակա-Վիշապ Դահակն է, որի դէմ կռւում է պարսիկների մէջ Հրուդէնը - Թրայէպրառնան: Սրան համապատասխանում է հնդկիկների մէջ Տրիպա աստուածը, որ Ինդրայի յայր-կութիւններն ունի եւ նոյնպէս կռւում է Վիշապի դէմ»⁴⁵:

Առասպելական դեւին առնչուող բազմաթիւ բառ-բառակապակցութիւններ են «**թաքնուած**» հայերէնի բարբառներում:

Այսպէս, Արարատեան, Արցախի, Կարնոյ եւ Մշոյ բարբառներում **դիւա-դադար անելը** նշանակում է անհանգստացնել, քնած մարդուն արթնացնել, իսկ **դիւադադար ըլելը**՝ քնահարած լինել, քունը փախչել⁴⁶:

Սաստիկ վախենալու երեւոյթը ժողովուրդը ներկայացրել է **դիւերոց ըլել** յարադիր բայով, իսկ առանց մերանի մածուն դառնալը **Գանձակում** արտայայտուել է **դիւամեր** բառով՝ իբրեւ դեւի մերած⁴⁷:

Սեբաստիայում եւ Մուշում **դիւաբունը**՝ իբրեւ դեւերի բնակարան՝ տուն, փոխաբերաբար նշանակում է **չար՝ վար մարդկանց տուն**, ինչի հետ կապուած նոյնիսկ առած է ստեղծուել՝ «**Քիչ կար դեւի դիւնոց, մէզ լէ իչաւ էրթը-գուց**»⁴⁸:

Լօռու եւ Տաւուշի մարգերի մի շարք գիւղերում (Շամուտ, Լորուտ, Անի-ծոր, Օձուն, Շնող, Կոթի, Աջաջուր, Իջեւան եւ այլուր) բնակչութեան խօս-

⁴³ Նոյն:

⁴⁴ Սարգսեան, «Շամուտ»:

⁴⁵ Մ. Աբեղեան, *Երկեր*, Գ. հատոր, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1968, էջ 60:

⁴⁶ Հայոց լեզուի բարբառային բառարան, հատոր Ա., էջ 335:

⁴⁷ Նոյն:

⁴⁸ Նոյն, էջ 336:

ուածքում այժմ էլ շրջանառում է **դրագոն**⁴⁹ բառը, որը ածականական կիրառությամբ է հանդես գալիս եւ նշանակում է **հսկայ, աժդահա**:

Երբեմն էլ **դրագոնը** տեղի ժողովրդական խօսքում հեգնախառն իմաստով է գործածում՝ ընդգծելով տուեալ անձնատրուքեան չափազանց գէր, մարմնի *անբնական* չափերով կառուցուածքը. «*Դէմս մի կնիկ դու էկաւ, կնիկ խու չէ՛ր, կնիկ խու չէ՛ր, մի իսկական դրագոն էր* (իմա՝ հսկայ, աժդահա, անչափ խոշորամարմին)»⁵⁰:

Վաղնջական ժամանակներից հայերը, յոյների հետ լինելով հարեաններ, երբեմն էլ ապրելով կողք կողքի (Լոռու տարածաշրջանում առ այսօր յոյներ են ապրում, կան նաեւ զուտ յունաբնակ գիւղեր), փոխադարձ շփումների ընթացքում, բազմաթիւ բառեր, արտայայտութիւններ են փոխառել: Ամենայն հաւանականութեամբ, **դրակոն** բառը եւ՝ **դրագոն** արտաբերմամբ, հայերէնը փոխ է առել յոյներից:

Դրակո-դրակոնը յունական դիցաբանութեան մէջ վիշապն է, թեւաւոր օձը: Այն անձնատրում է փոթորիկը, որը փորձում է կլանել արեգակին: Ըստ առասպելի՝ Դրակոնի բերանից, կրակ էր ժայթքում⁵¹: Հայերն այս փոխառած բառն իրենց խօսքում կիրառելիս նկատի են ունեցել առասպելական վիշապի միայն արտաքին կառուցուածքի՝ *ահ առաջացնող* անսովոր չափերը:

3-գ. Ծկակը, ըստ հայոց ժողովրդական հաւատալիքի (Ախալքալաք, գիւղ Սուլդա), *մի անիծուած թռչուն է*, որը տարին մի անգամ կարող է ջուր խմել, «*եթէ ուրիշ անգամ խմէ՛ խմածը թարախ կը դառնայ*»⁵²:

Հայերէնում այս *առասպելական թռչունը* գոյականական կիրառութիւնից վերածուել է բայական գործածութեան: Այսօր **ծկակել** բայը մի շարք բարբառներում եւ խօսուածքներում կիրառում է «*սաստիկ ծարաւ զգալ*», «*ծարաւից փանջուել*» իմաստով՝ «*Ծարաւ ծկակեցանք, գի՛նի ածիր*»⁵³:

Փոխաբերական իմաստով **ծկակ դառնալ** յարադրաւոր բայը նշանակում է սաստիկ պապակած, ծարաւի՝ «*Պապակել, ծկակ եմ դառել*»⁵⁴:

Եթէ **Բաղէշում** ծանր հարուածից շունչը կտրուելը, շնչարգել լինելը «**ոտ**» բազմապատկական ածանցով՝ **ծկակնոյրել**, բայով է արտայայտուած⁵⁵, ապա **Նոր Նախիջեւանում** սաստիկ փափագով մի բանի հետամուտ եղողին՝ կրկնաւոր բարդութեամբ՝ **ծկակ-ծկակ**⁵⁶ են ասում:

⁴⁹ Հայոց լեզուի բարբառային բառարանում **դրագոնը** բացակայում է:

⁵⁰ ԱՄՇ

⁵¹ Գալստեան, էջ 39. նաեւ՝ Մալխասեանց, *հյոր.* 4, էջ 343:

⁵² Մալխասեանց, *հյոր.* 2, էջ 343:

⁵³ Նոյն, էջ 344:

⁵⁴ Նոյն, էջ 343:

⁵⁵ Հայոց լեզուի բարբառային բառարան, *հյոր.* Բ., էջ 413:

⁵⁶ Նոյն, էջ 413:

Ծկակով կազմուած մէկ այլ յարադիր բայը՝ **ծկակ լինելը**, նշանակում է պապակելոց կոկորդը ցամաքել, կերածը կու չգնալ⁵⁷: **Ծկակի տալ** յարադիր բայական կառոյցում այն նշանակում է ուտելու մեծ փափագ արտայայտել՝ **«խորովածի համար ծկակի էր տալիս»**:

Ծկակը կիրառում է նաեւ **անէծքներում**, երբ մայրերը զայրոյթից ասում են անյագաբար ջուր խմող երեխային՝ **«Ծկակի՛ս»**⁵⁸:

Լօռիում (գ. Շամուտ) **ծկակել, ծկակն ըլելը** միքանի նշանակութիւն ունի՝

1. խեղդուել, շունչը կտրուել, շնչահեղձ լինել՝ **«Հենց տենըմ ա ծրկակն ա ըլում, բիթը յէդ ա քաշըմ»**:

2. ծարաւից կոկորդը ցամաքել:

3. կերածը կու չգնալ, ուտելիս խեղդուել:

Այսպէս, քոյի՝ վայրի խակ տանձ ուտելիս ասում են՝ **«Բուզքս ծկակըմ ա»**:

4. զայրանալուց խեղդուել:

5. Եթէ Սպիտակում *խիստ ծարաւելն* արտայայտում է **ծկակել** բայով (ծկակել եմ), ապա Քարինջում ասում է՝ **«Ծարաւ ծկակնել եմ»**: Ընդ որում, Շնողում **ծկակն էլալը** առնչում է ջուր կամ ընդհանրապէս հեղուկ խմելուն: Զուրը խմելիս եթէ լաւ չի գնում՝ բկին, շնչափողում է կանգնում, ասում են՝ **«Ծկակն էլա»**⁵⁹:

Ինչպէս ցոյց են տալիս հայերէնի տարատեսակ բարբառներից բերուած փաստերը՝ առասպելական **ծկակ** թռչունը, հազարամեակների միջով «անցնելով», մեր օրերում իր թռչնային գործառոյթը «վերափոխել է» մարդկանց վրայ թողած ազդեցութեամբ (**սաստիկ ծարաւելու, ինչ-որ բանից խեղդուելու, բկին կանգնելու, շունչը կտրուելու**)՝ դրանով իսկ աղերսելով հայ ժողովրդի առասպելական մտածողութեան ժամանակները մեր օրերի հետ:

ԱՌԱՍՊԵԼԱԿԱՆ ՈԳԻՆԵՐ

Ի տարբերութիւն առասպելական աստուածութիւնների, թռչունների ու կենդանիների, բնակատեղիների եւ շինութիւնների՝ հայերէնի բարբառներում եւ ժողովրդական ասոյթաբանութեան մէջ դրանց կիրառութիւնների բաւականին մեծ քանակ են կազմում **առասպելական չար եւ բարի ոգիներին** առնչուող հաւատալիքային պատմութիւնների յենքի վրայ ստեղծուած բառերն ու բառակապակցութիւնները, հետեւաբար նաեւ՝ ասոյթաբանական տարատեսակ դրսեւորումները:

4-1. Հայ ժողովրդական հաւատալիքներում եւ հայոց բառ ու բանում *առասպելական չար ոգիներից* նշանակայից տեղ են զբաղեցնում **սատանա-**

⁵⁷ Նոյն:

⁵⁸ Նոյն:

⁵⁹ Մեր գրանցումներից:

ները, որոնց առնչուող բանարուեստի նմուշների մէջ մեծ քանակ են կազմում սատանայի եւ մարդու մրցավեճերին վերաբերող առակները⁶⁰: Դրանցում մեծամասամբ յաղթում է մարդը, յատկապէս՝ կին արարածը⁶¹:

Նոր ժամանակներում սատանաները «պատսպարուել են» թէ՛ հայերէնի տարակերպ դրսեւորումներում, թէ՛ ժողովրդական ասոյթաբանութիւնում: Այսպէս, եթէ Լօռիում (Դսեղ), *սաստիկ վախենալու* երեւոյթը արտայայտուում է **սըրփաներոց ըլել** կամ **դիւերոց ըլել** յարադրաւոր բայով⁶², ապա Գանձակում (Արցախ) *սըրփներոց ըլելը սատանայի բաժին* դառնալն է⁶³:

Սատանաներին առնչուող բազմաթիւ *առած-ասացուածքներ* է ստեղծել մեր ժողովուրդը, որոնցում եւս առկայ է վաղնջական ժամանակների հաւատալիքային դրսեւորումը՝

* *Մարդն աւելի Սատանա է, քան թէ ինքը՝ Սատանան* (Մշոյ Բովանդիս)⁶⁴:

* *Կնիկը սատանից եօթ օր շուր ա ծնուել*⁶⁵:

* *Սատանէն կիրակմբին չարութիւն կանէ* (Շիրակ, Աշտարակ):

* *Սատանէն ասիգ օրեր* (սօն օրեր) *կը պըրըրի* (Ալաշկերտ):

* *Սատանէն ոչ մեռել ա, ոչ էլ մեռնելիք ա* (Աշտարակ, Թիֆլիս):

* *Սատանի ճամփին կայ, երկնքի ճամփին չկայ* (Վաղարշապ., Թիֆլիս):

* *Սատանէն հարսնիք չ'երթար, ըմմա փապուճները* (հողաթափերը) *կը դրկէ* (Եւդոկիա):

* *Սատանի մայլէն (թաղ) քեանդրբազու* (լարախաղաց) *խաղալ* (Ախալցխա)⁶⁶:

Լօռու տարածաշրջանում որեւէ գործի յաջող ընթացքի մասին խօսելիս անմիջապէս մէջ է բերում «*Սըրփանի անջակը խուլ* (իմա՝ յանկարծ սատանան չլսի)» սնտոխապաշտական արտայայտութիւնը:

Եթէ ձեռնարկած գործը անյաջող, թարս է ընթանում, Լօռիում եւ Տաւուշում այն վերագրում է սատանային՝ ասելով «*Նա'լլաթ (անէծք) քեզ, չա'ր սատանա*» զայրալից խօսք-արտայայտութիւնը⁶⁷:

⁶⁰ «Մարդու եւ սատանայի վեճը» եւ «Ապերախտ որդին եւ սատանան», *Հայ ժողովրդական առակներ*, կազմ. եւ մշակ.՝ Արտաշէս Նազինեան, «Նայիրի» հրատ., Երեւան, 2008, էջ 158, 162. Նաեւ՝ «Մոնթն ու սատանան», «Սատանան ու մարդը», «Մարդն ու սատանան», *Հայ ժողովրդական առակներ*, կազմ. եւ մշակ.՝ Արմէն Սարգսեան, «Էդիթ Պրինտ» հրատ., Երեւան, 2011, էջ 60, 67-69, 115:

⁶¹ «Պառան ու սատանան», «Հողագործն ու սատանան», *Հայ ժողովրդական առակներ*, էջ 81-82, 150-151:

⁶² Ս. Քոչարեան, *Դսեղ*, «Ասողիկ» հրատ., Երեւան, 2009, էջ 419:

⁶³ *Հայոց լեզուի բարբառային բառարան, հայրոր Ե.*, էջ 322:

⁶⁴ Սահակ Մովսիսեան (Բենսէ), «Հարք (Մշոյ Բովանդիս)», *Հայ ազգագրութիւն եւ բանահիւստութիւն, հպր. 3*, ԳԱ հրատ., Երեւան, 1972, էջ 161:

⁶⁵ *Հայ ժողովրդական առակներ*, էջ 151:

⁶⁶ Ա. Ղանալանեան, *Առածանի*, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., Երեւան, էջ 110:

⁶⁷ Մեր գրառումներից:

Շատ ճարպիկների համար էլ ժողովուրդն ասում է. «Սաքանին շապիկ կը հագցնի, կալուին՝ վարտիք»⁶⁸, իսկ չափազանց խորամանկների վերաբերեալ՝ «Սըքանըքերիցը թեզ ա ծնուել (իմա՝ սատանան անգամ նրան չի հասնի)»⁶⁹:

Լոռու մարզի Շամուտ գիւղում մինչեւ Ի. դարի կեսերը օգտագործուել է նաեւ **«Սըքանէն քեզ չըռչարի»** անէծք-արտայայտութիւնը, որը նաեւ կիրառուել է իբրեւ փաղաքշական խօսք⁷⁰:

Հայոց ժողովրդական խօսքում երկու արական կամ իգական **սաքանաները** երբեմն էլ *անուանապէս* են հանդէս գալիս՝ **Սիկ** եւ **Բիկ** կամ էլ՝ **Ալօ** եւ **Սլօ**:

Ըստ Արշակ Ալաօյաճեանի՝ սատանան երկու աղջիկ ունի՝ **Բըլիկը** եւ **Սիկը**. «Բիկը սաքանին երկու աղջիկներէն մին, որ միւս քրոջը՝ Սիկին հետ դժոխքին դուռը կը պահպանէ, կ'ըսեն»⁷¹:

Ժողովուրդը այդ երկու կերպարներին առնչուող ասացուածք էլ է ստեղծել՝ «Ո՛րեւէ խնդրոյ մը մէջ՝ երբ երկու անձեր գտնուին կամ երկու պարագաներ ներկայանան, մին քան զմիւսն յոռի, որոնցմէ ո՛չ մէկը կարելի չըլլայ նախընտրել, կ'ըսուի. «Նալլէթ (լանէթ) սըլիկին ալ, բըլիկին ալ», որ ժողովրդային ասացուածք մը դարձած է»⁷²:

Ըստ *նախիջեանցիների* հաւատալիքի՝ սատանայի երկու զաւակները *տղաներ* են՝ **Ալօն ու Սլօն**: Աբեղեանի գրառած *ասպապարեան* առած-ասացուածքներից մէկում՝ «Սատանէն երկու տղայ ունի՝ մինն Ալօն, մինը Սլօն. նալլաթ Ալոյին էլ, Սլոյին էլ»⁷³:

Այստեղ եւս պահպանվել է Ալաօյաճեանի՝ վերը յիշատակած դժոխքի պահապանների առասպելաբանութեան արձագանգը:

4-2. Ըստ Աճառեանի **շվոտը** Փետրուար ամիսն է, «...որ է ասորաբաբելական տոմարի 11րդ ամիսը»: ...Ըստ նախապաշարմանց՝ **սաքանաների ազգադութեան ամիսն է**. «Բայց զշուտ ամիսն անհնազանդեալ (դեպքն կախարդաց) գործեն զկամս իւրեանց՝ տանելով զոմանս ի մարդկանէ...»⁷⁴:

Պարսիկների մօտ՝ «ճիւաղ. է ազգ մի դիւաց, որք լինին յանշէն տեղիս եւ ի դաշտավայրս. որք մտեալ ի զանազան կերպարանս, եւ զմարդն ի ճա-

⁶⁸ Նոյն:

⁶⁹ Քոչարեան, էջ 419:

⁷⁰ Սարգսեան, «Շամուտ»:

⁷¹ Արշակ Ա. Ալաօյաճեան, *Պարմութիւն Եւրոկիոյ հայոց*, տպ. «Նոր Աստղ», Գահիրէ, էջ 1397-8:

⁷² Նոյն:

⁷³ Ղանալանեան, էջ 110:

⁷⁴ Հր. Աճառեան, *Հայերէն արմատական բառարան, հիփր. Գ.*, ԵՊՀ հրատ., Երեւան, 1977, էջ 537-8:

նապարհէ խոտորեցուցեալ՝ սպանանեն: Ըստ այսմ, արդի բարբառներում **շուտոր** նշանակում է մի տեսակ դե կամ ոգի, որ Փետրուարին է գործում»⁷⁵:

Բացի աճառեանական վերը բերուած մեկնաբանութիւնից, Մալխասեանցի բառարանում **շվոպը** տրուած է նաեւ ասացուածքային կառոյցով՝ **Շվոպը՝ դուրս, մարպը՝ ներս**: Այնուհետեւ ներկայացուած է հայոց մէջ տարածում գտած *հաւատալիքային դրսետրումը*. «Մի տեսակ չար ոգի, որ Փետրուարի վերջերին է յայտնուում, որ ձմեռը ապրում է մարդկանց բնակարաններում, իսկ գարնանը գնում է հանդերը. մարդկանց ինչ-ինչ վնասներ է պատճառում, բայց սատանի պէս չար չէ: Շվոտին հալածելու համար դէպի Մարտի 1ը լուսացող գիշերը ամանով լիքը ջուր են դնում դռան շէմքի վրայ, ապա հին շորեր, մորթիք, փալասներ եւն. վերցնելով խփում են տան ու գոմի պատերին եւ ասում. Շվոտը դուրս, Մարտը՝ ներս (սկզբնապէս՝ Փետրուարը գնաց, Մարտն եկաւ, ձմեռն անցաւ, գարունն եկաւ, իսկ փոխաբերաբար՝ չարը գնայ, բարին գայ)»⁷⁶:

Բացի չար ոգի իմաստից, ժողովրդի մէջ շվոտը փոխաբերաբար կիրառւում է նաեւ կատաղած, ցնդած, դիտտած իմաստով:

Ժողովուրդը Փետրուար ամիսը անուանել է նաեւ **շվոտամիս**: Հայոց լեզուի բարբառային բառարանում ներկայացուած են տարբեր բարբառներում **շվոպի** գործառոյթը եւ արտասանական տարբերութիւնները (Արարատեան, Ուրմիա-Խոյ, Պոլիս, Սեբաստիա, Կարին-Շիրակ, Խարբերդ, Դերսիմ-Քղի, Հաճըն, Մուշ՝ **շվոտ/շուէտ**, Վան՝ **շիւտ**, Մալաթիա՝ **Շհոդ, շուվեդ**, Խարբերդ-Բուլանխ՝ **շուէտ**, Նոր Բայազէտ՝ **շիւոդ**), դրանց իմաստային առանձնայատկութիւնները եւ հաւատալիքային դրսետրումները. **Մուշում՝** Փետրուարի վերջին գիշերը, **Ալաշկերտում՝** Փետրուար ամիսը, **Կեսարիայում, Սվեդիայում, Խարբերդում՝** Տեառնընդառաջի գիշերը յայտնուող ոգի, **Մուշում՝** Ալք, չար ոգի, **Սասունում՝** դեւ, չարք, որ ծաղի բարձրութիւն ունի, փոխաբերաբար նաեւ՝ բարձրահասակ, շատ բոյով, **Մալաթիայում՝** աներեւոյթ էակ, որն իբրեւ թէ մարդկանց խաբելով հեռու տեղեր է տանում, **Սվեդիայում՝** Շվոտի գիշեր՝ Տեառնընդառաջի գիշերը, երբ շոտտները իբր մտնում են կատուների փորը⁷⁷:

«Շուտորը քանից դուրս անելու գործողութիւնը Կարին-Ջալախքում, Մուշում, Ալաշկերտում կոչւում է **շուտորահան**, Սասունում՝ **շուտդահան կամ շուդհան**, որը տեղի է ունենում Փետրուարի վերջին գիշերը, մորթու կտորով կամ տանտիկնոջ **վարդիքով** գոմի մտկոյններին ու պատերին խփելով՝ ամեն հարուածի հետ «Շուտտ ի դուրս, Մարտ ի ներս» գոռալով շուտորը դուրս են հանում»⁷⁸:

⁷⁵ Աճառեան, *հյր*. Գ., էջ 537-8:

⁷⁶ Մալխասեանց, *հյր*. 3, էջ 540:

⁷⁷ Հայոց լեզուի բարբառային բառարան, *հյր*. Դ., էջ 283:

⁷⁸ Հայոց լեզուի բարբառային, *հյր*. Դ., էջ 283:

4-3. Հայոց դիցարանում **գրողը** մարդու ճակատագիրը որոշող եւ մարդուն անդրաշխարհի ուղեկցող հրեշտակն է:

Հայ ժողովրդական բառ ու բանում *գրողը* հանդէս է գալիս՝

ա. անէծքային կառոյցում՝

Գրողը քեզ տանի: Գրողի ծոցը գնաս: Գրողի փայ դառնաս:

բ. Գրողը կիրառում է նաեւ *փաղաքշական* իմաստով կամ էլ *յանդիմանանքով*.

Ա՛յ գրողը քեզ տանի, ինչի՞ չէիր էկել:

Ա՛յ գրողի տարած, էս ինչի ուշացար:

գ. առած-ասացուածքներում՝

Գրողն ինքն իրան անիծել չի տայ:

դ. մակերային դարձուածքով.

էպ գրողի տարած Վարդուշի ասածը ճիշտ դուս էկաւ:

ե. դարձուածային կառոյցով ենթակայ, երբ կանխաւ յայտնի է, թէ ում մասին է խօսքը՝

- *էպ գրողի տարածը ասած կ'ըլի:*

զ. չկայացած, չկայանալիք ինչ որ գործողութեան կամ կորցրած ինչ-որ բանի հանդէպ ցաւի զայրալից արտայայտութիւն՝ հիմնականում՝ երկխօսական-հարցուպատասխանական ասոյթաբանութիւնում՝

- *Զի ուզում գա: // - Գրողին:*

Կամ՝ - *Չկայ: // - Գրողին թէ չկա: (այսինքն՝ հէջ էլ թէ):*

• կամ էլ որեւէ գործողութիւն, երեւոյթ սրտովը չլինելը՝

- *Չեկաւ, գնաց (անձրեւ չի գայ):*

- *Գրողին գնա: (Գրողին թէ անձրեւ չի գաէ)*

* Կիրառում է նաեւ թէ՛ իբրեւ անէծք, թէ՛ իբրեւ փաղաքշական խօսք՝

• *Գրողի ծոցը գընաս, (նաեւ՝ մտերմիկ արտայայտութիւն, իբրեւ դիմելածեւ) Ա՛յ գրողը տանի քեզ (Ա՛յ գրողի տարած):*

Չար ոգի *գրողը*, *անատրակը* կամ *սեւանատրակը* օգտագործում է ժողովրդական խօսքի անէծքային կառոյցներում, յատկապէս երկխօսական՝ հարցուպատասխանական ասոյթաբանութեան մէջ: Շատ դէպքերում դրանք կիրառում են միասին, իբրեւ մէկը միւսին յաջորդող իրավիճակներ, երբ խօսակիցը հրաժարում է կատարել որեւէ յանձնարարութիւն:

Օրինակ՝

ա. ծնողի եւ երեխայի միջեւ՝

Երեխան. // - Չե՛մ գալիս:

Ծնողը. // - Գրո՛ղին գաս, սեւանատա՛կը գաս: ԱՄՇ, Լօղի

բ. – Մա՛մ: // - Գրող (գրող ու ցաւ...)

4-4. Տուրը Արցախում եւ Բոլնիս Խաչէնում (վերջիններս ԺԸ. դարի վերջին Արցախից Լոռու տարածաշրջան վերաբնակեցուածներն են⁷⁹) չար ոգին է⁸⁰:

Ըստ ժողովրդական սնահաւատութեան՝ չար ոգի **Տուրը** «հարուածում է գաւազանով ու մեռցնում: Երբ մէկը մեռնելիս մէջքի վրայ կարմիր բծեր են դուրս գալիս՝ ասում են, թէ տուրից է մեռել, տուրը գաւազանով խփել է մէջքին, եւ կարմիր բծերը նրա հարուածի հետքերն են»⁸¹:

Ըստ լոռեցիների հաւատալիքի՝ մութն ընկնելուց յետոյ չի կարելի կռանալ ու ջուր խմել աղբիւրից, որպէսզի թիկունքից յանկարծ *տուրը չխփի*: Ժողովուրդը հաւաստում է, որ տուրից խփուածի մէջքին ափի հարուածի հետքը դրոշմուած է լինում⁸²:

Ժողովրդախօսակցական լեզւում պահպանուած **տուրը տալ** արտայայտութիւնը նշանակում է *չար ոգին խփել*, իսկ **տուրը տուած ան՝ հիւանդութիւն**:

Տուրի վերաբերեալ կայ նաեւ ժողովրդական ասացուածք՝ «*Տուր կպչիլը աստուծու հիւանդութիւնն ա*»:

Տուրին առնչուող միքանի հաւատալիքային արտայայտութիւններ եւս պահպանուել են ժողովրդական խօսքում՝

- **Տուրը տուց ու տարաւ**: Այսինքն՝ չար ոգին հարուածեց:
- **Տուր է դիպել**: Այսինքն՝ չար ոգին է խփել:
- **Տուրը տուած ա**: Յանկարծակի մահուան եզրակացութիւն՝ չար ոգու մասնակցութեամբ:

Ինչ խօսք, թէ՛ վերը նշուած ժողովրդական ասացուածքը, թէ՛ արտայայտութիւնները Արցախում եւ Լոռիում կիրառուել են մինչեւ Ի. դարի 70ականները: Նոր ժամանակներում ժողովրդական բժշկութեան՝ հեքիմութեան հետ դրանք գործածութիւնից գրեթէ դուրս են եկել:

4-5. Ըստ Մալխասեանի՝ **այսը**, չար ոգին, չար շունչը, չար քամին է: Փոխաբերաբար նշանակում է նաեւ պիղծ, դել⁸³:

Այսով կազմուած բոլոր բառերը (*այսակիր, այսահար, այսաբեկ, այսահարուել* են.) առնչուում են ժողովրդական սնոտիապաշտութեանը: Այսպէս՝

- **Այսակիրը** կրում է իւր մէջ չար ոգի, որի մէջ բնակում է դելը: Զանազան ջղային հիւանդութիւններով հիւանդներին հին ժամանակ համարում էին այսակիր:

⁷⁹ Ե. Լալայեան, «Բորչալուի գաւառ», *Ազգագրական հանդէս*, 9-րդ գիրք, Թիֆլիս, 1902, էջ 200:

⁸⁰ *Հայոց լեզուի բարբառային բառարան*, *հղ. Զ.*, «Գիտութիւն» հրատ., Երեւան, 2010, էջ 255:

⁸¹ Մալխասեանց, *հղ. 4*, էջ 439:

⁸² Մեր գրառումներից (Լոռի՝ Վանաձոր, Շամուտ):

⁸³ Մալխասեանց, *հղ. 1*, էջ 81:

- Այսահար, այսաբեկ - դեկից զարկուած՝ բռնուած, դիւահար:
- Այսահարունել - այսից զարկուել, դիւահարունել, նաեւ՝ մոլեգնութիւնը բռնել, կատաղել: Էլ ի՞նչ ես այսահարունել:

Այսահարութիւնը հնում անբժշկելի էին համարում⁸⁴:

Լօռիում սնոտիապաշտական *այսահարունելը* փոխել է իր բուն իմաստը եւ ժողովրդական խօսքում նշանակում է *սաստիկ վախենալ, սըտաներոց ըլել*, իսկ *այսահարացրեցը՝ վախեցրեց*, յանկարծակիի բերեց՝

*Քշերվա կիսին որ միամիտ դէ՛մըս դուս չեկա՛ւ, այսահարացրեց. քիչ էր մնըմ լեղիս ճաքէր*⁸⁵:

Իդէպ, այս-այսահարունելը Հայոց լեզուի բարբառային բառարանում բացակայում է:

4-6. Եաղին Արցախում, Լօռիում, Արարատեան եւ Թիֆլիսի բարբառներում առասպելական մարդագողն է, նաեւ՝ թշնամի, գող, հարամի⁸⁶:

գ. Լօռի-Շամուտում **յեղին** փոթորիկը, աղէտն է⁸⁷:

Ժողովրդական խօսքում **Եաղին** հանդէս է գալիս՝

1. Մակդրային կառոյցում այն նշանակում է *շատ վատ, անմարդկային անձնատրուութիւն՝ «Ի՞նչ եաղի մարդ ա (նաեւ՝ եաղու մարդ)»*:

Սա համահունչ է «Գրողը քեզ տանի»-ին եւ Լօռիում կիրառւում են թէ՛ որպէս անէծք, թէ՛ որպէս կիսափառաբանական, կիսամտերմիկ արտայայտութիւններ:

2. դարձուածային կառոյցում հանդէս է գալիս թէ՛ իբրեւ մակդիր՝ «*էտ եաղին տարած Վարդիշաղը...*», թէ՛ իբրեւ ենթակայ, երբ կանխաւ յայտնի է, թէ ում մասին է խօսքը՝ «*էս զուլումի մէջ էտ եաղին տարածի* մատը խառը կըլի»:

3. Եթէ Լօռիում **Եաղին** անէծքի մէջ հանդէս է գալիս որպէս մարդագող՝ «*Յեղին քեզ տանի*», ապա Բայազէտ-Քեաւառում՝ որպէս փոթորիկ, աղէտ՝ «*Եաղին քեզ տանի*»:

Ի տարբերութիւն առասպելական այլեայլ դրսեւորումների՝ հայոց եւ հարեան ժողովուրդների դիցաբանական հետքեր պարունակող հնագոյն անձնանուններն այսօր էլ շարունակում են կենցաղավարել հայերի թէ՛ *տրական* (Սանասար, Բաղդասար, Դաւիթ, Տորք, Մհեր, Միհրան, Զօհրապ եւ այլք), թէ՛ *իգական* (Ծովինար, Անահիտ, Աստղիկ, Նանէ, Նարէ, Սաթենիկ եւ այլք) անուանաշարքում:

Առասպելական հերոսների ու տեղավայրերի որոշ անուանումներ (Արալի լեռ, Շամիրամի լեռ, Արզնի, Շամիրամի ջրանցք, Լեսկ, Մհերի դուռ եւն.) այսօր էլ շարունակում են կենցաղավարել ժողովրդի մէջ, եթէ դրանց առն-

⁸⁴ Նոյն, էջ 81:

⁸⁵ Մեր գրառումներից (Լօռի՝ Վանաձոր, Շամուտ):

⁸⁶ Հայոց լեզուի բարբառային բառարան, հտր. Դ., էջ 104:

⁸⁷ Մեր գրառումներից (Լօռի՝ Վանաձոր, Շամուտ):

չուող ասանդագրոյցները, իբրեւ տուեալ տեղանուան ստուգաբանութեան աղբիւր, ներկայացում են հետաքրքրուողներին:

Փաստենք նաեւ, որ մեր օրերում հայոց մէջ շրջանառուող դիցաբանական փոխառեալ անձնանուններից եւ տեղավայրերի անուանումներից շատերն ու նրանց առնչուող առասպելական գրոյցները լոյս են սփռում նաեւ հարեան երկրների վաղնջական ժամանակների պատմութեան, մարդկանց մտածողութեան վրայ եւ նպաստում մոռացութեան տրուած մի շարք էջերի բացայայտմանը:

ԱՄՓՈՓԵԼՈՎ

Հազարարամեակների ընթացքում աշխարհի, բնութեան երեւոյթների եւ մարդկային փոխյարաբերութիւնների վերաբերեալ ձեւատրուած ու գոյատեւած առասպելաբանական պատկերացումները մեր ապուպապերը մեկնաբանել են տարատեսակ աստուածութիւնների, առասպելական կենդանիների եւ տարաբնոյթ առեղծուածային ուժերի՝ աներեւոյթ չար ու բարի ոգիների գոյութեամբ, յօրինել դրանց հետ կապուած հաւատալիքային կաղապարներ եւ առասպելական պատմութիւններ:

Սակայն ընկերատնտեսական գիտա-մշակութային առաջընթացի պայմաններում կամայ թէ ակամայ դրանք աստիճանաբար մոռացութեան են տրուում: Դրանց մի մասը՝ պատառիկների տեսքով, «թաքնուել» է հայերէնի բարբառներում, հաւատալիքներում եւ ժողովրդական բառ ու բանում:

Հայ եւ հարեան ժողովուրդների դիցաբանների աստուածութիւնների, առասպելական բնակավայրերի եւ շինութիւնների, կենդանիների, թռչունների, չար եւ բարի ոգիների հետքեր պարունակող բազմաթիւ բառ-բառակապակցութիւններ այսօր էլ շարունակում են ինքնատիպ ու պատկերաւոր մեկնաբանութիւններով ներկայացնել հայերէնի բառապաշարը, շրջանառուել թէ՛ գրական, թէ՛ ժողովրդախօսակցական լեզւում ու ժողովրդական ասոյթաբանութիւնում:

Որքան էլ բարբառները եղել եւ մնում են հայերէնի հարստացման միջոցներից մէկը, այնուամենայնիւ դիցաբանական արտացոլումներով բարբառային բառ-բառակապակցութիւններից շատ քչերն են տեղ գտել ժամանակակից գրական հայերէնի բառապաշարում:

Որոշ բառ-բառակապակցութիւններ էլ եթէ կիրառւում են արդի հայերէնում, ապա իրենց մէջ պահպանել են առասպելական հերոսի արտաքին յատկանիշի բնութագրումը (*ազնաւոր*, *աժդահա*), գործողութեան գործառոյթի ամենայատկանշական կողմը (*գրող*), երբեմն էլ՝ ներքին՝ բացասական (*չար(ք)*, *սապանա*) կամ էլ դրական (*հրեշտակ*) բնութագիրը:

Հնագոյն ժողովուրդների դիցաբանների աստուածութիւնների, բնակատեղիների ու շինութիւնների, առասպելական կենդանիների, թռչունների, չար ոգիների առկայութիւնը հայերէնի բարբառներում, գրական հայերէնում, բառ ու բանում, մասնաւորապէս ժողովրդական ասոյթաբանութեան

մէջ եւ հաւատալիքներում մէկ անգամ եւս հաւաստում են վաղնջական ժամանակներում հայ եւ հարեւան ժողովուրդների դիցաբանական մտածողութեան, նրանց փոխադարձ շփումների ու ազդեցութիւնների, ընկերամշակութային փոխառնչութիւնների:

LEGENDARY EXPRESSIONS IN POPULAR BELIEFS, SAYINGS, AND DEPICTIONS

(Summary)

ARMEN SARGSYAN (armensargg@gmail.com)

Certain relationships and happenings between humankind and its milieu (such as geography and nature) have been interpreted by men as expressions of Gods, legendary animals, formidable mysteries and powers of evil and good. During millennia these primitive understandings have developed into beliefs and legends.

However, due to humankind's scientific and cultural progress these beliefs have disappeared from daily usage, though their remnants have survived in languages and colloquial expressions.

The paper unearths these remnants which have been preserved in the Armenian language and dialects, as well as in popular sayings and beliefs.

The author groups these traces into different categories of mythology, legendary locations and constructions, animals and birds, good and evil spirits.